ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<24>> Հոկտեմբերի 2022թ. N ՄՈ/628-Ա

ք. Արմավիր

«ԱՐՄԱՎԻՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՌՈՒԶԱՆՆԱ ԱՍՄԱՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Ռուզաննա Ասմարյանի 2022 թվականի հոկտեմբերի 21-ի դիմումը.

ո ր ո շ ու մ ե մ՝

1. «Արմավիրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ռուզաննա Ասմարյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդ 2022 թվականի նոյեմբերի 1-ից դեկտեմբերի 5-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Ռուզաննա Ասմարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Արմավիրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Արմավիրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Կարինե Բարսեղյանին:
3. 2022 թվականի նոյեմբեր 1-ից դեկտեմբերի 5-ը ներառյալ «Արմավիրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Կարինե Բարսեղյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Ռուզաննա Ասմարյանին աշխատանքի մեջ համարել 2022 թվականի դեկտեմբերի 6-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

VERIFIED OCSP 24.10.2022 17:18:26 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Ե. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ